«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ ֆրանսերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Թադևոսյան

Ղեկավար՝ Քնարիկ Պետրոսյան

Ուսումնական հաստատություն՝ թիվ 110 հիմնական դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն։
2. Ընթերցանության տեղը օտար լեզուների ուսուցման պրոցեսում։
3. Ընթերցանության էությունն ու առանձնահատկությունները։
4. Ընթերցանության ուսուցման հիմնական սկզբունքները։
5. Ընթերցանության տեսակները։
6. Ընթերցանությունը որպես ուսուցման միջոց։
7. Ընթերցանությանը նպաստող վարժություններ։
8. Եզրակացություն
9. Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքի թեման է «Ընթերցանության տեղը օտար լեզուների ուսուցման պրոցեսում»: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ընթերցանության տեղը, գտնել առկա խնդիրները, դուրս բերել առավել արդյունավետ մեթոդներն ու հնարները ընթերցանության կարողությունների ձևավորման և ամրապնդման գործում: Օտար լեզուների դասավանդման մեթոդիկան ներկայացնում է ժամանակակից լեզվաքաղաքականության և լեզվակրթության գլխավոր մոտեցումներն ու պահանջները, լեզուների ուսուցման և ուսումնառության հայեցակարգերը, սկզբունքները, մեթոդներն ու տեխնոլոգիաները, լեզվակրթության մեկնաբանումը սոցիալական քաղաքականության տեսանկյունից, մասնավորապես բազմալեզվության, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական արժեքների սերմանումը, լեզվական միջոցների յուրացումը՝ ուղղված ժամանակակից լեզուների բնագավառում սովորողների հաղորդակցական կարողություններ ու հմտությունների զարգացմանը: Այսօր մեծացել է ընթերցանության դերն ու նշանակությունը: Երիտասարդ սերունդը ավելի սիրով է կարդում և «ընթերցելը ժամանակակից է դարձել» դպրոցներում: Տեղեկատվության հոսքը մեծ է, և այսպիսի դարաշրջանում, երբ կարճ ժամանակում հնարավոր են մեծ փոփոխություններ, ընթերցանության շնորհիվ շատ հարցեր այլ լուծումներ են ստանում: Կար շրջան, երբ ընթերցանությունը երկրորդական էր դարձել, սակայն նորարական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ մեծացավ ընթերցանության կարևորությունը:

Աշխատանքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ հետազոտություն, օրինակներ, վարժություններ, որոնք ուղղված են ընթերցանության բարելավվմանը, դուրս են բերվել առավել նպատակահարմար մեթոդների կիրառումը:

Օտար լեզվի դասավանդման առաջնային ***<u>նպատակը հաղորդակցելն է</u>*** , որի ուսուցումը տարվում է ուսումնական ողջ պրոցեսում, կրթական և դաստիարակչական խնդիրներն իրագործվում են հաղորդակցական նպատակների հետ միաժամանակ: Միաժամանակ այս նպատակից էլ բխում են մի շարք նպատակներ: Դրանք են՝

- հաղորդական կարողությունների զարգացում,
- ազատ տեղաշարժման իրավունքից օգտվելու հնարավորությունների իրականացում,
- ուսումնասիրվող լեզվի մշակույթի, պատմության, աշխարհագրության, սովորույթների, ավանդույթների իմացություն,

- սովորողների մոտ սեփական երկրի և այլ ազգերի մշակույթների հանդեպ հարգանքի ձևավորում.
- Ինքնակրթությամբ զբաղվելու կարողության ձևավորում։

Օտար լեզու դասավանդելիս ուսուցման ողջ պրոցեսը ուղղված է լեզուն որպես հաղորդակցման միջոց օգտագործելուն, այսինքն գործնական հմտությունների և կարողությունների ձևավորմանը։

Դպրոցում օտար լեզվի ուսուցումը կազմակերպվում է հաղորդակցական սկզբունքի վրա, այսինքն սովորողները պետք է տիրապետեն ինֆորմացիա ընդունելու և հաղորդելու կարողությունը։

Ընթերցանության դերը մեծ է օտար լեզուների ուսուցման պրոցեսում։ Ընթերցանության խնդիրներն ըստ հաղորդակցական նպատակի բաժանվում են երկու խմբի՝

ա) ստանալ տեքստում ընդգրկված ինֆորմացիան

բ) ընկալման հետ մեկտեղ հաղորդել այն։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ընթերցանության տեղը օտար լեզուների ուսուցման պրոցեսում

Ընթերցանությունը օտար լեզվի ուսուցման կարևոր նպատակներից մեկն է։

Ընթերցանության խնդիրներն ըստ հաղորդակցական նպատակի բաժանվում են երկու խմբի՝

ա) ստանալ տեքստում ընդգրկված ինֆորմացիան

բ) ընկալման հետ մնեկտեղ հաղորդել այն

Ընթերցանությունն առաջին դեպքում ընթանում է **լուռ,** իսկ երկրորդ դեպքում՝ **բարձրաձայն։**

Բարձրաձայն և լուռ ընթերցանության ձևերը դիտվում են որպես խոսքային գործունեության երկու ենթատեսակ։ Դպրոցում ուսուցման նպատակը լուռ ընթերցանությունն է։ Բարձրաձայն ընթերցանությունն օգտագործվում է միայն որպես ուսուցման միջոց (բանավոր խոսքի զարգացման, լեզվական նյութի ամրապնդման և այլնի համար)։

Շատ կարևոր է հիշել, որ տեքստը հասկանալուն պետք է հասնել միայն **լուռ ընթերցանությամբ։**

Դասավանդման պրակտիկան ցույց է տալիս, որ հաճախ տեքստերն օգտագործվում են զանազան այլ նպատակների և ոչ թե ընթերցանության կարողությունների զարգացման համար։ Թվենք ուսուցման պրոցեսում տեքստի կատարած ֆունկցիաները՝

1. Տեքստը հանդիսանում է՝

ա) լեզվական նոր նյութի աղբյուր (կարդալ և դուրս գրել բառերը)

բ) նյութ՝ լեզվական երևույթները վերլուծելու համար

գ) արտասանության ուսուցման միջոց (տեքստը բարձրաձայն կարդում են սովորողները, իսկ ուսուցիչն ուղղում է արտասանական սխալները)

դ)բանավոր խոսքի համար նմուշ

Ընթերցանության հիմնական ձևը, սկսած չորրորդ դասարանից պետք է լինի լուռ ընթերցանությունը։ Ուսուցիչը չպետք է սկզբից բարձրաձայն ընթերցի տեքստը, քանի որ սովորողները իրենք պետք է ծանոթանան նրա բովանդակությանը։ Նույնիսկ եթե տեքստի որոշ պարբերություններն օգտագործվում են որպես արտասանական վարժություններ, դրանք պետք է

կատարել **միայն լուռ ընթերցանությունից** հետո, այսինքն՝ երբ տեքստի բովանդակությունն **արեն հասկանալի է դարձել:**

Ուրեմն սովորողները տեքստը պետք է կարդան նաև լուռ, ապա բարձրաձայն : Դպրոցում ուսուցման խնդիրը լուռ ընթերցելու կարողությունների զարգացումն է: Այսպիսով , ընթերցանության ուսուցման **նպատակը** սովորողների ինքնուրույն ինֆորմացիա ստանալու կարողությունների ձևավորումն է: Այս պրոցեսը ընթանում է լուռ ընթերցանության ձևով: Ընթերցանությունը գործնականի հետ մեկտեղ ունի նաև կրթական և դաստիարակչական նշանակություն: Ընթերցանությունն իմացական գործունեություն է: Այն կապված է տեքստից որոշակի ինֆորմացիա ստանալու հետ:

Շատ կարևոր են նաև տեքստով ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունները: Ճիշտ կազմակերպված աշխատանքը նպաստում է սովորողների լեզվական և խոսքային կարողությունների զարգացմանը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընթերցանությունը որպես խոսքային գործունեություն, հաղորդակցման ամենակարևոր տեսակներից մեկն է։ Ընթերցանության **նպատակը** տեքստում **հաղորդվող ինֆորմացիայի ընկալումն ու իմաստավորումն է։ բ**

Ընթերցանությունը կատարվում է հետևյալ նպատակներով. ընթերցողը ինֆորմացիան ընկալում է իր առաջ ծառացած խնդիրները լուծելու (լուռ ընթերցանություն) կամ ինֆորմացիան ուրիշին հաղորդելու համար (բարձրաձայն ընթերցանություն)։

Չնայած ընթերցանության բովանդակության ընկալումը և իմաստավորումը ընթանում է միաժամանակ, այնուամենայնիվ այդ պրոցեսն ապահովող հմտություններն ու կարողությունները մեթոդիկայում ընդունված է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝

Առաջին խմբի կարողությունները կազմում են **ընթերցանության տեխնիկան**, իսկ երկրորդը՝ **բովանդակության ընկալումը։**

Ընթերցանության տեխնիկա ասելով հասկացվում է հնարների **այն ամբողջությունը**, որն ապահովում է լեզվական ինֆորմացիայի ընկալումն ու համապատասխան մշակումը (տառերի, տառակապակցությունների, քերականական հատկանիշների և այլն)

Իմաստային ինֆորմացիա ստանալու համար պետք է դիմել լուռ ընթերցանության, իսկ ընթերցանության **տեխնիկան** զարգացնելու համար՝ թե բարձրաձայն և թե լուռ։ :

Այսպիսով լուռ ընթերցանությունն ուսուցման նպատակն է, իսկ բարձրաձայնը՝ ուսուցման միջոց (բանավոր խոսքի զարգացման , լեզվական նյութի ամրապնդման և այլն)։

Ընթերցանության ձևերի փոխհարաբերությունը հնարավոր է ներկայացնել հետևյալ սխեմայի միջոցով։



Բարձրաձայն և լուռ ընթերցանության ձևերը կատարում են տարբեր ֆունկցիաներ։ **Բարձրաձայն** ընթերցանության խնդիրն է **ինֆորմացիա հաղորդելը,** իսկ **լուռ** ընթերցանությանը՝ **ինֆորմացիայի ընդունումը։**

Բարձրաձայն և լուռ ընթերցանության հնարքները տարբեր են։ Բարձրաձայն ընթերցելիս ի հայտ են գալիս տեքստի հնչյունափոխված վերարտադրումը, տեքստը առավել փոքր հատվածներով ընկալելը (ընթերցանության նեղ դաշտ), ավելի երկար դադարներ կատարելը և այլն։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Ընթերցանությունը ուսուցվում է որպես խոսքային գործունեություն։ Ուսուցման պրոցեսում տեքստի ընթերցումը միշտ պետք է հանդես գա որպես հաղորդակցման կոնկրետ դրսևորում, որն ուղղված է ոչ թե ընդհանրապես բովանդակության հասկանալուն, այլ ընթերցական կարողությունները տվյալ աստիճանին համապատասխան մակարդակով զարգացնելուն։

Բովանդակությունը հասկանալու պրոցեսը ղեկավարվում է առաջադրանքի օգնությամբ, որը տրվում է սովորողներին տեքստի ընթերցումից առաջ և կարդացածի բովանդակության հասկանալն ստուգելու ժամանակ։

2. Ընթերցանության ուսուցումը պետք է դիտել որպես ճանաչողական խնդիրների լուծման պրոցես։

Ընթերցանության ճանաչողական խնդիրները լուծելու համար անհրաժեշը է, որ տեքստերը լինեն հետաքրքիր և որաշակի նշանակություն ունենան սովորողների համար։

3. Ընթերցանության ուսուցումը օտար լեզվում հենվում է սովորողների մայրենի լեզվից ձեռք բերած ընթերցանության փորձի վրա։

Օտար լեզվով ընթերցանության ուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների մայրենի լեզվից ունեցած ընթերցանական հմտությունները։

Ելնելով ընթերցանության նպատակից, սովորողները մայրենի լեզվով տեքստը տարբեր ձևով (արագ, դանդաղ, ուշադիր) են կարդում։ Այս նույն կարողությունը պետք է զարգացնել նաև օտար լեզվում։

4. Ընթերցանության ուսուցումը հենվում է յուրացվող լեզվական կառուցվածքների վրա։

Լեզվական կառուցվածքների տիրապետումը և ոչ միայն հեշտացնում և արագացնում է ընթերցանության պրոցեսը, այլ նպաստում է տեքստի բովանդակությունը ճիշտ հասկանալուն։

5. Ընթերցանության ուսուցումը ներառում է սովորողների ոչ միայն ռեցեպտիվ (ունկնդրելը, ընթերցելը) այլև ռեպրոդուկտիվ (խոսելը, գրելը) գործունեությունը։

Ընթերցանության իրականացումը պահանջում է հնարների ավտոմատացում, որն առաջին հերթին վերաբերում է տեքստի ռեցեպտիվ մշակման հնարներին, որոնք կազմում են ընթերցանության տեխնիկայի հիմքը։

Որպես սրա արտաքին դրսևորում հանդես է գալիս ընթերցանության մեծ արագությունը և տարբեր արագությամբ կարդալու ընդունակությունը (ճկունությունը)։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Առանձնացվում է ընթերցանության չորս տեսակ. թռուցիկ, ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու, մանրակրկիտ և փնտրողական:

1. Թռուցիկ ընթերցանություն: Թռուցիկ ընթերցանության նպատակը ամենաընդհանուր գծերով **բովանդակության մասին պատկերացում կազմելն է:** Ստացած ինֆորմացիայի հիման վրա կարդացողը որոշում է թե արդյոք իրեն պետք է այդ հոդվածը կամ գիրքը: Դրա անհրաժեշտությունը որոշելու համար բավական է կարդալ վերնագրերը կամ ենթավերնագրերը, առանձին հոդվածները, նախադասությունները և այլն: Ըստ էության տեղի է ունենում ընտրովի ընթերցանություն:

Ընթերցանության այս տեսակը ընթերցողից պահանջում է կատարելագործված հմտություններ և լեզվական որոշ նյութի տիրապետում: Այդ պատճառով էլ սովորողներին ծանոթացնում են թռուցիկ ընթերցանության միայն առանձին հնարներին:

2. Ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանություն: Ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ժամանակ կարդացողի նպատակն է՝ ծանոթանալ գրքի, հատվածի, պատմվածքի կոնկրետ բովանդակությանը, պարզել ինչպես շոշափվող հարցերը, այնպես էլ դրանց լուծումը: Նման դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է գործողությունների զարգացմանը և հիմնական ինֆորմացիային:

Իր բնույթով սա «անընդմեջ» ընթերցանություն է (կարդացվում է ամբողջ տեքստը), որն ընթանում է արագ տեմպով, քանի որ կարդացողը ձգտում է առավելագույն ամբողջականությամբ հասկանալ տեքստում ամփոփված ինֆորմացիան:

Ընթերցանության բոլոր տեսակներից ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանությունը ամենասահունն է, այդ պատճառով էլ օգտագործվում է սովորողների տեխնիկական հմտությունների ավտոմատացման աստիճանը որոշելու համար:

3. Մանրակրկիտ ընթերցանություն : Այս տիպի ընթերցանության ժամանակ բովանդակության ընկալման ամբողջականության աստիճանը 100 % է: Մանրակրկիտ ընթերցանությունը ենթադրում է տեքստի և լեզվական նյութի վերլուծություն: Ընթերցանության ընթացքում օգտագործվող լեզվական նյութի մտապահումն ապահովում է լեզվական դրական փորձի կուտակում, որի առկայությունը բանավոր խոսքի անսխալության՝ մասնավորապես խոսելու,

անհրաժեշտ պայմանն է։ Ընթերցանության ժամանակ տեքստերի վերլուծվող միավորները տարբեր կոնտեքստներում ենթարկվում են բազմակի կրկնողության։ Սրանով էլ պայմանավորվում է սովորողների գիտակցության շրջանակներում համապատասխան միավորների իմաստային սահմանների և դրանց գործունեության կանոնների ճշտորոշումը (բառային միավորների կապակցողությունը, քերականական կառուցվածքների ընկալումը և դրանց հարաբերակցությունը որոշակի իրադրությունների հետ)։

4. <u>փնտրողական ընթերցանությունը</u>, որի նպատակն է անծանոթ տեքստում գտնել կոնկրետ տեղեկություններ, փաստեր և այլն։ Թռուցիկ ընթերցանությունը տարբերվում է փնտրողականից գործունեության արդյունիքց։ Ընթերցանության այս 4 տեսակների ուսուցանելն էլ միջնակարգ դպրոցի խնդիրն է։



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ընթերցանությունը հանդիսանում է ոչ միայն ուսուցման նպատակ (խոսքային գործունեության ինքնուրույն տեսակ) այլ նաև միջոց:

Որպես ուսուցման միջոց իր ուրույն տեղն ունի բարձրաձայն ընթերցանությունը: Այն լայնորեն օգտագործվում է արտասանական ուսուցման համար, նպաստում է խոսելու հմտությունների զարգացմանը, խոսքի արտահայտչականությանը:

Բարձրաձայն ընթերցանությունը պարտադիր է հատկապես ուսման սկզբնական փուլում, որն արվում է տեխնիկական հմտությունների զարգացման նպատակով, սակայն որոշ նվազումով այն շարունակվում է մինչև ուսման ավարտը:

Ստորև ներկայացնենք ընթերցանության զարգացմանը նպաստող վարժություններ:

1. Ընթերցանության տեխնիկայի զարգացմանը նպաստող վարժություններ:

1) Կարդալ և գրել ei, ou, au տառակապակցություն ունեցող բառեր
   ei- neige, beige, seize, freize
   ou-bonjour, journal
   au-auto, jaune
2) Բառաշարքում գտնել այն բառը, որը հանգավորվում է առաջինի հետ
   prête a)bête, b)crête c)même d)tête
3) Բառաշարքում գտնել այն բառերը, որոնք արտահայտում են ժամանակի իմաստ
   a) au bord de la mer
   b) dimanche
   c) a` l'ombre
4) Տվյալ բառակապակցություններից կազմել նախադասություններ՝ ճիշտ ռիթմիկ խմբերով և դադարներով.
   1. Avant de rentrer
      a` la maison
      Michel
      va au magasin.
      Avant de rentrer a` la maison
      Michel va au magasin.
      2.dans la parc
      Dimanche

vous avez joué

Dimanche vous aver joué dans la parc

2) Լեզվական անծանոթ նյութի օգտագործման հմտությունը զարգացնող վարժություններ

Օտար լեզվով ընթերցելիս սովորողներն անխուսափելիորեն հանդիպում են անծանոթ բառերի , այդ իսկ պատճառով պետք է սովորեցնել սովորողներին բացահայտել անծանոթ բառերի իմաստը: Անծանոթ բառերով տեքստերը ներմուծվում են ուսուցման միջին աստիճանից սկսած: Մինչև այս աստիճանը սովորողը լեզվական փորձի և բառարանի միջոցով արդեն տիրապետում է անծանոթ բառերի իմաստի բացահայտման հիմնական եղանակներին:

Լեզվական փորձ ասելով նկատի ունենք կռահելու կարողությունը , որն իրականացվում է.

ա) բառի բաղադրիչների ճանաչման հիման վրա

բ) մայրենի, ռուսաց և օտար լեզուներում բառերի ընդհանրության հիման վրա

գ)կոնտեքստի հիման վրա

Առաջին դեպքում սովորողը հենվում է արմատների և ածանցների վերաբերյալ օտար լեզվից ունեցած գիտելիքների հիման վրա, երկրորդ դեպքում մայրենի լեզվի գիտելիքների, իսկ երրորդում՝ երեք լեզուներից ձեռք բերած գիտելիքների հիման վրա:

3) Կռահման կարողությունները զարգացնող վարժություններ:

1. Գտնել տվյալ նախադասություններից հարցին համապատասխանողը

1 Aram va a՝ l'e'cole.

2 II vois son ami.

Qui va a՝ l'e'cole?

2.Կռահել բովանդակությունը.

1. ելնելով ծանոթ փաստերից.

Le 21 juin, tu pourras chanter dans la rue car c'est la Fête de la musique. Cette fête a été inventee par les Français en 1982.
Maintenant , elle existe dans 65 pays du monde, même en Chine.

2. Կարդալ առաջին մասը և կռահել տեքստի շարունակությունը:

3. Գտնել տվյալ նախադասությունների շարունակությունը

Je mange	français
Tu paries	du pain
Nous joûns	des arbres
II dessine	a` la balle

4. Տեքստի բովանդակությունը հասկանալու կարողությունները զարգացնող վարժություններ

Տեքստը հասկանալը ներառում է փաստական ինֆորմացիայի **ընկալումը** և **իմաստավորումը**: Այն արտահայտվում է տեքստի նշանակությունն ու իմաստը հասկանալով:

Փաստական ինֆորմացիայի ընկալումը հենվում է՝

ա) տեքստի լեզվական նյութի մշակման հմտությունների վրա.

բ)առանձին փաստերը հասկանալու վրա.

գ)փաստերի միջև կապ հաստատելու և դրանք մեկ ամբողջության մեջ միավորելու վրա.

Սա ընթերցողից պահանջում է հետևյալ կարողությունները՝

ա)տեքստի առանձին բաղադրիչների և առավել էական փաստերի առանձնացում.

բ)փաստերի համադրում և ընդհանրացում.

գ)գլխավորի և երկրորդականի տարբերում.

ե)ինֆորմացիայի գնահատում

զ)փաստերի և մտքերի տրամաբանական մշակում և միավորում.

Քանի որ ընթերցանության նպատակը տեքստի բովանդակությունը հասկանալն է, ուստի սովորողները նախքան տեքստը կարդալը ծանոթ չպետք է լինեն բովանդակությանը, որպեսզի ընթերցելը չվերածվի լեզվական վարժության:

4)Տեքստի բովանդակությունը հասկանալու կարողությունները զարգացնող վարժություններ. Այդ վարժությունները բաժանվում են հետևյալ խմբերի

1. Գտնել այն նախադասությունները, որոնք պարունակում ն կարևոր տվյալներ

2. Տեքստը բաժանել իմաստային մասերի

3. Գտնել յուրաքանչյուր մասի գլխավոր միտքը

4. Վերնագրել յուրաքանչյուր պարբերությունը

5. Փոխել տեքստի սկիզբը կամ վերջը

6. Շարունակել տեքստը՝ պահպանելով տրամաբանական կապը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝

- Ընթերցանությունը որպես խոսքային գործունեության գրավոր տեսակ հաղորդակցման ամենակարևոր տեսակներից մեկն է

- Ընթերցանությունը ունի իր հաղորդակցական խնդիրը և հանդիսանում է տեղեկատվություն ստանալու աղբյուր: Այն ունի իր կարողությունները.

1. ընդհանուր բովանդակության ընկալում.

2. տեղեկատվության որոնում.

3. բովանդակության ամբողջական և մանրամասն ընկալում:

- Դպրոցում ուսուցման խնդիրն է լուռ ընթերցելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

- Առանձնանում եմ ընթերցանության մի քանի տեսակներ՝ թռուցիկ, ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու և մանրակրկիտ Ընթերցանության տեսակները մեծ դեր են խաղում օտար լեզվի (տվյալ դեպքում անգլերենի) յուրացման գործընթացում և նպաստում են սովորողների մոտ համապատասխան ունակությունների և որակների ձևավորմանը: Սովորողներին, տարբեր նպատակներով բազմաբնույթ նյութեր կարդալու և ընկալելու հնարավորություն տալով, մենք նպաստում ենք սովորողների աստիճանաբար ճկուն և ինքնուրույն դառնալուն, ըստ նշանակման նպատակի կիրառում ենք տարբեր տեսակի ռազմավարություններ, ընդհանուր միտքը կամ որոշ առանձնահատուկ կետեր կռահելու և մանրամասնությունները հասկանալու նպատակով: Կարելի է նպաստել արդյունավետ ընթերցանության իմացության զարգացմանը՝ գործածելով համարժեք առաջադրանքներ, որոնք օգնում են սովորողին կիրառել համապատասխան մարտավարություն՝ գիտակցելով դրանց կարևորությունն ու արդյունավետությունը: Ամփոփելով ընթերցանության գործունեության փուլերը, կարող ենք ասել հետևյալը՝ ընթերցանության բոլոր փուլերում աշակերտները պետք է ունենան հստակ նպատակ՝ ելնելով գործունեության իմաստից և նրա անձնական կողմնորոշումից, որն էլ թույլ է տալիս պատասխանելու «ինչու՞ սովորել» հարցին: Մեր կատարած հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ օգտագործած տվյալ մեթոդները օգնում են երեխաների մոտ դասի, բառերի կամ տեքստի ամարապնդելուն, ավելի լավ հիշելուն և ճիշտ արտասանելուն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Լույս հրատ,Երևան 1985
2. https://urok.1sept.ru/articles/681703
3. https://www.academia.edu/40146332/
4. <<Bon voyage>> 1,2 Karineé Amiryan
5. <<Ֆրաանսերեն 8>> դասագիրք, Ն.Ա. Սելիվանովա, Ե.Դ. Դերեգովսկայա